



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 ապրիլի 2025 թվականի N 388-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1569-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածական տվյալների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման (այսուհետ՝ որոշում)՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ղեկավարվելով «Տարածական տվյալների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցը՝ համաձայն N 1 հավելվածի.»:

3. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»:

4. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետում «տրանսպորտային» բառը փոխարինել «ճանապարհատրանսպորտային» բառով:

5. Որոշմամբ հաստատված N 2 հավելվածում՝

1) 2-րդ և 3-րդ գլուխները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ 2. «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալները համարվում են ռեֆերենց: Այսինքն՝ դրանք այնպիսի տվյալներ են, որոնք հանդիսանում են տարածական հիմք այլ ոլորտներին վերաբերող թեմատիկ տարածական տվյալներ կապակցելու կամ ներկայացնելու համար: «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալները դիտարկվում են քարտեզագրական տեսանկյունից: Հատկանշական է, որ անշարժ գույքին վերաբերող տեղեկատվությունը պետք է ներկայացվի միասնական տվյալների բազա միայն այն դեպքում, երբ դրանք արդեն ներկայացված են կադաստրային ռեգիստրի էլեկտրոնային բազայում (օրինակ՝ բաժանվող կամ միավորվող գույքի դեպքում փոփոխությունը ներկայացվում է միայն գույքի հաստատումից, վավերացումից ու գրանցումից հետո): Անշարժ գույքը երկրի մակերևույթի (հող կամ ջուր) հնարավորինս առանձնացված տարածքներ են, որոնց նկատմամբ առկա են որոշակի իրավունքներ, որոնք սահմանվում են օրենսդրությամբ: Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ

դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության: «Անշարժ գույք» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակը միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ միասնական պետական ռազմավարություն, արդյունավետ կառավարում, քարտեզագրում և մոդելավորում իրականացնելու համար:

13. «Անշարժ գույք» տարածական տվյալների հիմնական առանձնահատկություններն են՝

1) պարունակում են հանրային հատվածի համար հետաքրքրություն ներկայացնող տարածական տեղեկատվություն.

2) տեղեկատվությունը կիրառելի է կառավարման բոլոր մակարդակներում.

3) «Անշարժ գույք» տարածական տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

14. «Անշարժ գույք» տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական (քարտեզագրական) շերտերը՝

1) **շենք-շինություն.**

2) **հողամաս.**

3) **կադաստրային թաղամաս:**

15. **Շենք-շինություն** շերտը համարվում է առանցքային կարևորություն ունեցող շերտերից մեկը, քանի որ մի կողմից, շենքերն այն վայրերն են, որտեղ մարդիկ ապրում են, աշխատում և ծախսում են իրենց ժամանակի մեծ մասը, որտեղ նրանք պետք է ունենան կենսապահովման լավ պայմաններ, պաշտպանված լինեն ռիսկերից (ջրհեղեղ, հրդեհ, երկրաշարժ և այլն), աղտոտիչներից (աղմուկ, օդի աղտոտում և այլն): Մյուս կողմից էլ, շենքերը և նրանց բնակիչները բնական ռեսուրսներ սպառող են հանդիսանում (ջեռուցում, հող, տրանսպորտ, շինարարական նյութեր և այլն), հետևաբար, անհրաժեշտ է խթանել և վերահսկել քաղաքների տարածումը և նպաստել ավելի կայուն շինարարությանը: Շենք-շինություններն իրենց պատմական կամ ճարտարապետական հետաքրքրության պատճառով կարող են նաև հատուկ պահպանվող օբյեկտներ լինել:

1) **Շենք-շինությունները** բնական կամ արհեստական նյութերից, երկրի վրա, ստորերկրյա կամ վերերկրյա կառուցված ծավալային, հարթային կամ գծային շինարարական համակարգ են՝ կազմված կրող, պարփակող կամ համակցված (կրող և պարփակող) կոնստրուկցիաներից և նախատեսված բնակվելու կամ ժամանակավոր գտնվելու, տարբեր աշխատանքային ու արտադրական պրոցեսներ կատարելու (կախված ֆունկցիոնալ նշանակությունից), նյութերի, շինվածքների ու սարքավորումների տեղադրման կամ պահեստավորման, մարդկանց ու բեռների տեղափոխման, պաշտպանական և այլ նպատակների համար:

2) Ըստ նպատակային նշանակության՝ շենք-շինությունները դասակարգվում են հետևյալ 3 խմբերի՝

ա. Բնակելի,

բ. Հասարակական,

գ. Արտադրական:

3) Բնակելի նպատակային նշանակության շենք-շինությունները, ըստ գործառնական նշանակության լինում են՝

ա. Անհատական բնակելի տուն՝ առանձնատուն, այգետնակ (ամառանոց),

բ. Օժանդակ և տնտեսական շինություն՝ անասնաշենք, հացատուն, խորդանոց, մարագ, ցախատուն, անհատական օգտագործման ավտոտնակ, շվաքարան, ջերմոց, մառան, լողավազան, ջրավազան, պարիսպ և այլ բնակելի կառույց,

գ. Բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենք,

դ. Ավտոտնակ՝ ավտոկայանատեղի, ավտոհանգրվան,

ե. Հանրակացարան:

4) Հասարակական նպատակային նշանակության շենք-շինությունները, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են.

ա. Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, գիտական, գիտահետազոտական, կրթական, ուսումնական, նախադպրոցական, հանրակրթական, ուսումնարան, միջին մասնագիտական, բարձրագույն, լրացուցիչ կրթության, արտադպրոցական դաստիարակության, ուսանողական հանրակացարան և այլ գիտակրթական շինություն),

բ. Առողջապահության, սոցիալական ապահովության շենք և շինություն՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, հոսպիտալ, ամբուլատորիա, շտապ բժշկական օգնության կայան, ծննդատուն, կաթնային խոհանոց, դեղատուն, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, առողջապահական գործակալություն, վերականգնողական կենտրոն, դիագնոստիկ կենտրոն, առողջարան, առողջարանային դպրոցական ճամբար, մանկատուն, ծերանոց, պրոֆիլակտորիա և այլ առողջապահական ու սոցիալական շինություն,

գ. Սպորտի, հանգստի և ժամանցի շենք և շինություն՝ մարմնակրթական կենտրոն, սպորտային կենտրոն, մարզադաշտ, ձիարշավարան, կենդանաբանական այգի, բուսաբանական այգի, թենիսի կորտ, լողավազան, ավտոդրոմ, հրաձգարան, սպորտային դահլիճ, հանգստյան տուն, հանգստի բազա, երիտասարդական ճամբար, հյուրանոց, զբոսաշրջային բազա, մոթել, քեմփինգների գիշերային ակումբ, ատրակցիոն խաղերի դահլիճ, ավտոմատ խաղերի դահլիճ, խաղատուն և այլ սպորտի, հանգստի ու ժամանցի շինություն,

դ. Մշակույթի, արվեստի շենքեր և շինություններ՝ գրադարան, թանգարան, ցուցասրահ, պատկերասրահ, ակումբ, մշակույթի տուն, թատրոն, հանգստի կենտրոն, կինոթատրոն, համերգային համալիր, մարզահամերգային համալիր, կրկեսների, արվեստանոց և այլ մշակութային շինություն,

ե. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքեր և շինություններ՝ խանութ, կրպակ, շուկա, տոնավաճառ, ռեստորան, բար, ճաշարան, սրճարան, ավտոլցավորման կայան, գազալցման կայան, ավտոտեխսպասարկման կայան, հանրային ավտոկայանատեղի, վերանորոգման կետ, լուսանկարչատուն, քիմիական մաքրման կետ, կոշիկի և կարի անհատական պատվերների սրահ, վարսավիրանոց, լվացքատուն, երկրորդական հումքի ընդունման կետ, ներկատուն և այլ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման,

զ. Կոմունալ տնտեսության շենքեր և շինություններ՝ հարսանյաց տուն, սգո սրահ, գերեզմանատուն, բաղնիք, սաունա, հասարակական զուգարան և այլ կոմունալ տնտեսության,

է. Վարչակառավարչական, ֆինանսական, կապի և տրանսպորտի շենքեր և շինություններ՝ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական հիմնարկ, հասարակական կազմակերպություն, դրամատուն, բանկ, տարբեր տեսակի գրասենյակներ, իրավաբանական խորհրդատվության, նոտարական գրասենյակ, տարբեր տեսակի գործակալություններ, կապի բաժանմունք, ավտոկայան, օդանավակայան, երկաթուղային կայարան, ուղևորների սպասարկման գրասենյակ, տրանսպորտային գործակալություն, տոմսերի իրացման կետ, հրշեջ կայան, լրատվական կենտրոն, արխիվ, սպահովագրության հիմնարկ, դեսպանություն, հյուպատոսություն, միջազգային կազմակերպություն, հեռուստաընկերություն, ռադիոընկերություն, ավտոմատ հեռախոսակայան, քրեակատարողական հիմնարկ, զորամաս և այլ վարչակառավարչական, ֆինանսական, կապի և տրանսպորտի,

ը. Կրոնական, պաշտամունքային շենքեր և շինություններ՝ եկեղեցի, վանք, տաճար և այլ կրոնական, պաշտամունքային,

թ. Բնակչության պաշտպանության համար նախատեսված քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ՝ ապաստարան, հակաճառագայթային թաքստոց և այլ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական:

16. Արտադրական նշանակության շենքերը և շինությունները, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են՝

1) **Արդյունաբերական՝** գործարան, ֆաբրիկա, լվացքատուն, էլեկտրակայան, ենթակայան, թափոնների վերամշակման և վերջնական տեղադրման կառույց, ձկնաբուծարան, ձկնաբուծական լիճ, արհեստանոց, տարբեր տեսակի արտադրամասեր, կոմբինատ, լեռնահանքային արտադրություն, շինարարական կազմակերպություն, մեծածախ բազա, տպարան, պահեստ, գիտաարտադրական կազմակերպություն, հանքարդյունաբերական, պոմպակայան, կարգավորիչ ջրամբար, մաքրման կայան, հիդրոտեխնիկական կառույց, կաթսայատուն, ավտոպարկ, դեպո և այլ արդյունաբերական շինություն.

2) **Գյուղատնտեսական՝** անասնաշենք, թոչնանոց, ջերմոց, դեզանոց, չորանոց, սիլոսի հոր, պահեստ, անասնաբուժական կայան, արհեստական սերմավորման կայան, սառնարանային տնտեսություն, կերախոհանոց, սերմաբուծական կայան, թոչնաբուծական

կայան, անասնաբուժական կայան, տնկարկային տնտեսություն, գյուղատնտեսական մեքենատրակտորային պարկ, գյուղատնտեսական մթերքների մթերման կետ և այլ գյուղատնտեսական շինություն:

17. Մեկից ավելի տարբեր նպատակային նշանակությամբ օգտագործվող շենքերը, շինություններն ընդգրկվում են այն նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման կազմում, որն ունի ավելի մեծ մակերես: Շենք-շինություններին վերաբերող տարածական տվյալների բազան ծառայում է մի քանի ընդհանուր նպատակների՝ տեղանքի մասին ընդհանուր պատկերացում կազմելու, տեղանքում կողմնորոշվելու, շենք-շինությունների հետ կապված բազային քարտեզներ, որոշակի մոդելներ ստեղծելու, տարածական պլանավորման և կառավարման, զարգացման ծրագրերի մշակման: Այս թեմային վերաբերող տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով և հետևյալ հատկանիշներով՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id)** - օբյեկտի արտաքին նույնականացուցիչը պատասխանատուի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Այս նույնականացուցչի հիմնական նպատակը տարբեր աղբյուրների և շենք-շինությունների միջև կապ ապահովելն է (օրինակ՝ կադաստրի ռեգիստրի էլեկտրոնային բազայի հետ կապ, որտեղից կարելի է գտնել տեղեկատվություն սեփականատիրոջ, վարձատուի, գնահատման և այլնի մասին)։

2) **Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code)** - այն թվերի համակցություն է, որը տրվում է անշարժ գույքի միավորին կամ դրա առանձին մասերին և պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ միավորը գոյություն ունի որպես մեկ միասնական տարածական կամ նպատակային նշանակությամբ անբաժանելի ամբողջություն կամ չի փոփոխվել տվյալ միավորի կադաստրային տարածքը կամ ենթատարածքը.

3) **Մարզի ծածկագիր (Marz_Code).**

4) **Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code).**

5) **Թաղամասի ծածկագիր (Block_Code)**- կադաստրային թաղամասի ծածկագիրն է, կազմվում է քառանիշ թվերից, սկսվում է 0001-ից.

6) **Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)** - կազմվում է քառանիշ թվերից և սկսվում է 0001-ից.

7) **Շենք-շինությունների ծածկագիր (Building_Code)** - հողամասին ամրակայված շենքերին, շինություններին տրված առանձին կադաստրային ծածկագրերն են, որոնք կազմված են եռանիշ թվերից և սկսվում է 001-ից.

8) **Շենք-շինությունների առանձին միավորների ծածկագիր (Separate_Unit_Code)** - շենքերի, շինությունների մաս հանդիսացող անշարժ գույքի առանձին միավորներին (բնակելի և ոչ բնակելի տարածքներին) տրվող և եռանիշ թվից բաղկացած ծածկագիրն է, որը սկսվում է 001-ից.

9) **Շենք-շինությունների հարկայնություն (Building_Floor)** - ցույց է տալիս տվյալ շենքում առկա վերգետնյա հարկերի քանակը.

10) **Շենք-շինությունների ավարտվածության աստիճան (Completion_stage_building)** - ցույց է տալիս տվյալ շենք-շինության ավարտվածության աստիճանը: Այս դաշտում լրացվում է հետևյալ տվյալներից որևէ մեկը՝ ավերակ, անավարտ, 0-50% (ներառյալ), 51-80% (ներառյալ), 81% և ավելի.

11) **Շենք-շինությունների վնասվածություն (Building_Damage)** - ցույց է տալիս տվյալ շենք-շինությունների վնասվածության աստիճանը: Եթե շենքը վնասված չէ, այս դաշտը չի լրացվում և մնում է դատարկ.

12) **Տանիք (Roof)** - այստեղ ներկայացվում է տանիքի տեսակին վերաբերող տեղեկատվություն, թե ինչ նյութով է պատրաստված՝ կղմինդր, թիթեղ, թերթաքար (շիֆեր), այլ ջրամեկուսիչ նյութ.

13) **Միջհարկային ծածկի նյութ (Interfloor_roofing_material)** - ցույց է տալիս շենք-շինությունների միջհարկային ծածկի տեսակը՝ երկաթբետոն, փայտ, այլ նյութ.

14) **Կառուցման նյութ (Material)** - ցույց է տալիս շենք-շինությունների կառուցման շինանյութի տեսակը՝ բազալտ, տուֆ, երկաթբետոն, մետաղ, աղյուս կամ սնամեջ մանր բլոկ, փայտ, խամքար, կոպտատաշ քար, այլ տեսակի քար, հիմնակմախքային, խոշորապանել, խոշորաբլոկ.

15) **Երեսպատման նյութ (Material_Facade)** - ցույց է տալիս շենք-շինությունների երեսպատման նյութը՝ առանց արտաքին հարդարման, սրբատաշ, ապակեպատ, երեսպատված, սվաղած.

16) **Կառուցման տարեթիվ (Date)** - ցույց է տալիս շենք-շինությունների կառուցման տարեթիվը.

17) **Բնակարանների քանակ (Number_Apartments)** - այս դաշտը լրացվում է բազմաբնակարան շենքերի համար և նշվում է շենքում առկա բնակարանների ընդհանուր թիվը.

18) **Շենք-շինությունների բարձրություն (Height_Building)** - ցույց է տալիս շենք-շինությունների՝ գետնից ունեցած բարձրությունը՝ արտահայտված մ-ով.

19) **Բարձրություն (Elevation)** - ցույց է տալիս շենք-շինությունների տեղակայման վայրի (կենտրոնակետի) բարձրությունը ծովի մակարդակից.

20) **Ծավալ (Volume)** - ցույց է տալիս շենք-շինությունների ծավալը.

21) **Մակերես (Area)** - ցույց է տալիս շենք-շինությունների մակերեսը՝ արտահայտված մ²- ով.

22) **Պարագիծ (Perimeter)** - ցույց է տալիս շենք-շինությունների պարագիծը.

23) **Նպատակային նշանակություն (Purpose)** - ցույց է տալիս շենք-շինությունների նպատակային օգտագործման տեսակը (բնակելի, հասարակական, արտադրական).

24) **Գործառնական նշանակություն (Operational_Use)** - ցույց է տալիս շենք-շինությունների գործառնական օգտագործման տեսակը.

25) **Գործառնական նշանակության մանրամասներ (Operational_Use_Details)** - այստեղ ներկայացվում են շենք-շինությունների գործառնական նշանակության հետ կապված մանրամասներ.

26) **Հասցե (Address)** - ցույց է տալիս շենք-շինության հասցեն.

27) **Ստորգետնյա հարկերի քանակ (Number_Floors_Below_Ground)** - ներկայացվում է ստորգետնյա հարկերի քանակը.

28) **Էլեկտրաէներգիա (Connection_Electricity)** - ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները միացված են էլեկտրաէներգիայի սնուցման աղբյուրին, թե ոչ.

29) **Գազամատակարարում (Connection_Gas)** - ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները գազաֆիկացված են, թե ոչ.

30) **Կոյուղի (Connection_Sewage)** - ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները միացված են հանրային կոյուղու ցանցին, թե ոչ.

31) **Ջրագիծ (Connection_Water)** - ցույց է տալիս, թե տվյալ շենք-շինությունները միացված են ջրամատակարարման ցանցին, թե ոչ.

32) **Միավորում/բաժանում (Join_Division)** - ներկայացվում է շենք-շինությունների միավորման կամ բաժանման մասին տեղեկատվություն:

18. Շենքերի, շինությունների ռեեստրի հիմնական աղյուսակի կառուցվածքը ներկայացված է «Շենքեր, շինություններ շերտի հատկանիշներ» աղյուսակում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Շենքեր, շինություններ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code)	VarChar (24)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (2)
Բնակավայրի (վարչական շրջանի) ծածկագիր (Settlement_Code)	VarChar (3)
Թաղամասի ծածկագիր (Block_Code)	VarChar (4)
Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)	VarChar (4)
Շենք-շինությունների ծածկագիր (Building_Code)	VarChar (3)
Շենք-շինությունների առանձին միավորների ծածկագիր (Separate_Unit_Code)	VarChar (3)
Շենք-շինությունների հարկայնություն (Building_Floor)	Integer (2)
Շենք-շինությունների ավարտվածության աստիճան (Completion_stage_building)	VarChar (20)
Շենք-շինությունների վնասվածություն (Building_Damage)	VarChar (50)
Տանիք (Roof)	VarChar (50)
Միջհարկային ծածկի նյութ (Interfloor_roofing_material)	VarChar (20)

Կառուցման նյութ (Material)	VarChar (50)
Երեսապատման նյութ (Material_Facade)	VarChar (50)
Կառուցման տարեթիվ (Date)	Date
Բնակարանների քանակ (Number_Apartments)	Integer(3)
Շենք-շինությունների բարձրություն (Height_Building)	Double (3)
Բարձրություն (Elevation)	Double (3)
Ծավալ (Volume)	Double (3)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)
Նպատակային նշանակություն (Purpose)	VarChar (50)
Գործառնական նշանակություն (Operational_Use)	VarChar (80)
Գործառնական նշանակության մանրամասներ (Operational_Use_Details)	VarChar (50)
Հասցե (Address)	VarChar (50)
Ստորգետնյա հարկերի քանակ (Number_Floors_Below_Ground)	Integer (2)
Էլ. էներգիա (Connection_Electricity)	Boolean
Գազամատակարարում (Connection_Gas)	Boolean
Կոյուղի (Connection_Sewage)	Boolean
Ջրագիծ (Connection_Water)	Boolean
Միավորում/բաժանում (Join_Division)	Boolean
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

19. Հողամաս-Հողի վերգերնյա և ստորգերնյա տարածքի մաս, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գրնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում: Հողամասերը

հանդիսանում են «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում են որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code).**

3) **Մարզի ծածկագիր (Marz_Code).**

4) **Բնակավայրի ծածկագիր (Community_Code).**

5) **Թաղամասի ծածկագիր (Block_Code).**

6) **Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code).**

7) **Հողամասի սահմանի տեսակ (Land_Border_Type)** - ցույց է տալիս անշարժ գույքի միավորի՝ հողամասի սահմանների տեսակը, որը կարող է լինել մոտավոր, ճշգրիտ և վիճելի:

20. Մոտավոր են համարվում անշարժ գույքի սահմանների սխեմատիկ արտապատկերումները կադաստրային քարտեզների (հատակագծերի) վրա՝ առանց սահմանային ճշգրիտ չափագրումների:

21. Ճշգրիտ են համարվում անշարժ գույքի սահմանների շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատների արտապատկերումները կադաստրային քարտեզների (հատակագծերի) վրա՝ իրենց ճշգրիտ սահմաններով և մակերեսով:

22. Վիճելի են համարվում այն սահմանները, որոնց արտացոլումն առաջացնում է կից սեփականության սուբյեկտների անհամաձայնությունը:

1) **Հողամասի չափված (հաշվառված) մակերես (Measured_Land_Area).**

2) **Հողամասի հաշվարկված մակերես (Calculated_Land_Area).**

3) **Պարագիծ (Perimeter):**

23. Հողամասերին վերաբերող հիմնական հատկանիշների աղյուսակի կառուցվածքը ներկայացված է «Հողամասերի շերտի հատկանիշներ» աղյուսակում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Հողամասեր շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer (10)
Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code)	VarChar (16)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (2)
Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)	VarChar (6)
Թաղամասի ծածկագիր (Block_Code)	VarChar (4)
Հողամասի ծածկագիր (Land_Parcel_Code)	VarChar (4)
Հողամասի սահմանի տեսակ (Land_Border_Type)	VarChar (10)
Հողամասի չափված մակերես (Measured_Land_Area)	Double (6)
Հողամասի հաշվարկված մակերես (Calculated_Land_Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջի ամսաթիվ (End_Date)	Date

24. **Կադաստրային թաղամաս** - առանձնացված տարածք է, որը բնության մեջ սահմանազատվում է փողոցներով, ճանապարհներով, երկաթգծերով, գետերով, ջրանցքներով, բնական լանդշաֆտի կամ բնության մեջ հստակ առանձնացված (այդ թվում՝ հողամասերի) սահմաններով: Կադաստրային թաղամասը հանդիսանում է «Անշարժ գույք» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 3)՝

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id).
- 2) Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code).
- 3) Մարզի ծածկագիր (Marz_Code).
- 4) Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code).
- 5) Թաղամասի ծածկագիր (Block_Code).

6) Թաղամասի մակերես (Block_Area).

7) Պարագիծ (Perimeter).

8) Սկզբի ամսաթիվ (Start_Date).

9) Վերջին ամսաթիվ (End_Date):

Աղյուսակ 3. Թաղամաս շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer (10)
Կադաստրային ծածկագիր (Cadastre_Code)	VarChar (11)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (2)
Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)	VarChar (6)
Թաղամասի ծածկագիր (BlockCode)	VarChar (4)
Թաղամասի մակերես (Block_Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

ԳԼՈՒԽ 3. «ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

25. «Գնահատում» տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական (քարտեզագրական) շերտերը՝

1) **Տարածագնահատման գոտիականություն-հողամասերի և շինությունների (գտնվելու վայրի) գոտի:** Տարածագնահատման գոտիականությունը հանդիսանում է «Գնահատում» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 1)՝

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id),

բ. **Տարածագնահատման գոտու համար (Valuation _Zone_No)** - ցույց է տալիս տարածագնահատման գոտին: Առանձնացվում են ՀՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի հողերի 20 տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիներ,

գ. **Մակերես (Area),**

դ. **Պարագիծ (Perimeter),**

ե. **Մարզի ծածկագիր (Marz_Code),**

զ. **Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code),**

է. **Սկզբի ամսաթիվ (Start_Date),**

ը. **Վերջին ամսաթիվ (End_Date):**

Աղյուսակ 1. Տարածագնահատման գոտիականություն շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer (10)
Տարածագնահատման գոտու համար (Valuation _Zone_No)	Integer (10)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (2)
Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)	VarChar (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

2) **Գնահատման շրջան** - գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման շրջաններ, որոնք հետևյալն են՝ Մերձարաքսյան, Ուրց Կոտայք-Շամիրամ, Կոտայք-Թալին, Վեդի-Ներքին Արփա, Ուրց-Վայոց ձոր, Ախուրյան-Սպիտակ, Աշոցք, Սևան, Ապարան-Հրազդան, Ներքին Դեբեդ-Աղստև, Վերին Դեբեդ-Աղստև, Փամբակ-Ներքին

Ձորագետ, Վերին Ձորագետ, Սյունիք, Որոտան, Ալայան, Ենթալայան, Կիսաանապատային, Տափաստանային, Մարգագետնատափաստանային, Անտառամարգագետնային: Գնահատման շրջանը հանդիսանում է «Գնահատում» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 2)՝

ա. Արտաքին նույնականացուցիչ (Id),

բ. Գնահատման շրջանի անվանում (Valuation_Region) - ներկայացվում են գնահատման շրջանների անվանումները,

գ. Մակերես (Area),

դ. Պարագիծ (Perimeter),

ե. Սկզբի ամսաթիվ (Start_Date),

զ. Վերջին ամսաթիվ (End_Date):

Աղյուսակ 2. Գնահատման շրջան շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer (10)
Գնահատման շրջան (Valuation_Region)	VarChar (35)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

3) **Գնահատման խումբ** - գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման խումբն է, և գյուղատնտեսական նշանակության բոլոր հողատեսքերը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի) դասակարգված են գնահատման 1-ից 5 խմբերի:

26. Գնահատման խումբը հանդիսանում է «Գնահատում» բազային խմբի տարածական տվյալ և ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 3)՝

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id).
- 2) Գնահատման խմբի համար (Valuation_Group_No).
- 3) Մակերես (Area).
- 4) Պարագիծ (Perimeter).
- 5) Սկզբի ամսաթիվ (Start_Date).
- 6) Վերջին ամսաթիվ (End_Date):

Աղյուսակ 3. Գնահատման խումբ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)_	Integer (10)
Գնահատման խմբի համար (Valuation_Group_No)	Integer (10)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

».

2) 4-րդ գլխում՝

ա. 1-ին աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ 1. Սեփականության սուբյեկտ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Սեփականության սուբյեկտ (Ownership)	VarChar (35)

Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (2)
Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)	VarChar (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

»,

բ. 28-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերությունում 3-րդ աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ 2. Սերվիտուտ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Սերվիտուտի տեսակ (Right_Of_Way_Type)	VarChar (35)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)
Մարզի ծածկագիր (Marz_Code)	VarChar (2)
Բնակավայրի ծածկագիր (Community_Code)	VarChar (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

»,

3) 5-րդ գլխի 1-ին աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ 1. Հողերի նպատակային և գործառնական նշանակության շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)

Նպատակային նշանակություն (Purpose)	VarChar (20)
Գործառնական նշանակություն (հողատեսք) (Operational_Use)	VarChar (70)
Գործառնական նշանակության (հողատեսքի) մանրամասներ (Operational_Use_Details)	VarChar (70)
Ոռոգելիություն (Irrigation)	VarChar (15)
Մակերես (Area)	Double (6)
Պարագիծ (Perimeter)	Double (4)
Մարզի ծածկագիր (Marz_ _Code)	VarChar (2)
Բնակավայրի ծածկագիր (Settlement_Code)	VarChar (6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

»,

4) 6-7-րդ գլուխները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«ԳԼՈՒԽ 6. «ՀԱՍՑԵՆԵՐ» ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ
ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՌԵԵՍՏՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

31. Հասցեն (անշարժ գույքի հասցեն) վավերապայմանների (ռեկվիզիտ) որոշակիորեն համակարգված համախումբ է, որով միանշանակորեն որոշվում է հասցեավորման օբյեկտի տեղը բնակավայրում: Այն կարող է պարունակել հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, բնակավայր, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն), անշարժ գույքի հերթական համար: Հասցեն հանդես է գալիս նաև որպես տարածական կետային օբյեկտ, որը մարդուն ընթերցելի կերպով նույնականացնում է գույքի (օբյեկտի) ամրագրված տեղադիրքը:

32. «Հասցեներ» բազային խմբի տարածական տվյալները հասցեների միասնական ռեեստրի հիմքն են, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գործող հասցեների պաշտոնական աղբյուր՝ տարբեր պետական և մասնավոր կառույցների,

ֆիզիկական անձանց օգտագործման համար: Միաժամանակ, հասցեների էլեկտրոնային ռեեստրը հանդիսանում է տեղեկատվական գործիք, որի միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները կատանան նոր հասցեներ տրամադրելու, հասցեների ռեեստրում որոնումներ, հարցումներ կատարելու հնարավորություն:

33. Այս տվյալների օգտագործողներ են հանդիսանում՝

1) ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինները.

2) նոտարները, դատարանները.

3) տեղական ինքնակառավարման մարմինները:

34. Հասցեներ կայացվում է որպես առանձին շերտ, քանի որ բազմաբնույթ տվյալներ, շերտեր աշխարհագրորեն կապված են հասցեի հետ, և այն համարվում է ուղղակիորեն կապող օղակ տվյալ շերտի տեղանքի և օգտագործողի միջև:

35. Այն օբյեկտները, որոնք կարող են ունենալ հասցեներ, կոչվում են **հասցեավորված օբյեկտներ**: Հասցեի տեղադիրքն առավել հաճախ որոշվում է նրանով, թե այն ինչպես է իդենտիֆիկացվում հարակից հասցեավորված օբյեկտների հետ:

36. **Հասցեավորման օբյեկտ**՝ հողամասեր, շենքեր, շինություններ և դրանց առանձին մասերը, որոնք հնարավոր է օգտագործել որպես անշարժ գույքի ինքնուրույն միավորներ՝ դրանց նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան:

37. **Հասցեավորվող օբյեկտ**՝ այն տարածական օբյեկտներն են, որոնց ասոցացումը հասցեի հետ ունի որոշակի իմաստ:

38. Հասցեավորման ընթացքում կարևոր է որոշել, թե տարածական որ օբյեկտները պիտի ունենան հասցե: Հասցե սովորաբար ունենում են իրական աշխարհում գոյություն ունեցող օբյեկտները: Սակայն հասցե կարող են ունենալ նաև պլանավորված (նախագծված), կառուցվող կամ պատմական օբյեկտները:

39. Էլեկտրոնային ռեեստրի տվյալների բազայում հասցեների բնութագրիչները ներկայացվում են մեկ հիմնական և 5 օժանդակ աղյուսակներով: Հիմնական աղյուսակը ռեյացիոն կապերով կապված է նաև այլ գերատեսչությունների և նախարարությունների բազաներից ստացված հասցեների հետ, որոնք դիտարկվում են որպես «Հին հասցեների բազաներ»: Միաժամանակ, հասցեների հիմնական աղյուսակը ինֆորմացիա է ստանում

տարածական շերտերից: Հասցեների էլեկտրոնային ռեեստրի բազայի ER (Entity – Relationship) դիագրամը ներկայացված է 1-ին նկարում:

40. Ստորև ներկայացված է տվյալների բազայում ընդգրկված տվյալների բնութագրիչների նկարագրությունը՝

1) **Հասցեի արտաքին նույնականացուցիչ (Address_Id)**. պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Այս նույնականացուցչի հիմնական նպատակը տարբեր աղբյուրների և հասցեի բաղադրիչների միջև կապ ապահովելն է.

2) **Անշարժ գույքի միավորի նույնականացուցիչ (Unit_Id)**. պատասխանատու մարմնի կողմից հատկացված անշարժ գույքի միավորի եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով հասցեի վերաբերյալ տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով.

3) **Մարզի անվանում (Marz_Name)**. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված մարզի անվանում.

4) **Բնակավայրի տեսակ (Settlement_Type)**. այս տվյալի միջոցով ցույց է տրվում բնակավայրի տեսակը՝ քաղաք, գյուղ.

5) **Համայնքի անվանում (Community_Name)**. համայնքներն ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ են: Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը՝ առանձին կամ այլ բնակավայրի հետ միասին, ընդգրկվում են համայնքների մեջ.

6) **Բնակավայրի անվանում (Settlement_Name)**. բնակավայրը մշտական բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջականություն կազմող և այլ բնակավայրերից տարածքային, տնտեսական կամ պատմական առումով տարանջատված տարածքային միավոր է.

7) **Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (NAO_type)**. պողոտաներ, փողոցներ, հրապարակներ, անցուղիներ, փակուղիներ, խճուղիներ, մայրուղիներ, թաղամասեր, տեղամասեր, միկրոթաղամասեր, տարածքներ և այլ գոյական կամ գոյա-

կանական բառակապակցություններ: Տեսակների հետ պետք է անվանակոչվի և գործածվի սեռական-տրական հոլովաձև (օրինակ՝ Մաշտոցի պողոտա, Գարեգին Նժդեհի հրապարակ): Տվյալների բազայում առանձնացնում են հետևյալ հիմնական տեսակները՝

ա. թաղամաս՝ բնակավայրի կառուցապատված տարածքի այն մասը, որը սահմանազատված է փողոցներով, հրապարակներով, նրբանցքներով և այլնով,

բ. հրապարակ՝ շենքերով և (կամ) փողոցներով շրջափակված, չկառուցապատված, բայց ընդհանուր օգտագործման տարածք,

գ. մայրուղի՝ միջպետական կամ հանրապետական նշանակության ճանապարհ, որն իրար է միացնում քաղաքներ,

դ. խճուղի՝ մեկ բնակավայրից սկսվող և մայրուղային ճանապարհով մեկ այլ բնակավայրի հետ կապվող ճանապարհ,

ե. պողոտա՝ բնակավայրի առավել մեծ և լայն փողոց, որն իր երկայնքով պետք է ունենա պուրակներ, հետիոտնային անցումներ, մայթեր,

զ. փողոց՝ բնակավայրի տրանսպորտային ցանցի մաս կազմող՝ տրանսպորտային միջոցների և մարդկանց շարժման համար նախատեսված տարածք.


8) **Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (NAO_Name).** ամենատարածված օրինակներն են փողոցների, պողոտաների, խճուղիների անունները: Այն բնակավայրերում, որտեղ չկան անվանումներ, փողոցները (պողոտաները և այլն) նշվում են թվերով.

9) **Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանման տեսակ (SUB_NAO_Type).** փակուղիներ, նրբանցքներ, անցումներ, անցուղիներ, շարքեր և այլ գոյական կամ գոյականական բառակապակցություններ: Տեսակները կիրառվում են ուղիղ ձևով՝ առանց հոլովումների, իսկ երկու Ենթաներբնակավայրային օբյեկտի առկայության դեպքում պետք է անվանակոչվի և գործածվի սեռական-տրական հոլովաձև (օրինակ՝ Գարեգին Նժդեհի հրապարակ 1-ին նրբանցք, Իս. Աբովյանի փողոց 2-րդ նրբանցքի 1-ին փակուղի): Տվյալների բազայում առանձնացնում են հետևյալ հիմնական օբյեկտների տեսակները՝

ա. Նրբանցք՝ նեղ, ոչ լայն փողոց, որը միացնում է երկու և ավելի հարևան փողոցները և թույլ է տալիս փողոցից մուտք դնելի բակեր, ավտոտնակներ և այլն,

բ. Փակուղի՝ որևէ փողոցից սկսվող և վերջնամասում մեկ այլ երթուղեկի փողոցի չհատվող փողոց.

10) **Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (SUB_NAO_Name).** օբիեկտներն են նրբանցքների, փակուղիների, անցումների անվանումները և համարները.



Նկ. 1 Հասցեների էլեկտրոնային ռեեստրի բազայի ER (Entity – Relationship) դիագրամ

11) **Անշարժ գույքի օբյեկտի համար (House_Number).** անշարժ գույքի նույնականացուցիչ կամ հերթական համար, որը թույլ է տալիս տարբերակել այն հարևան հասցեներից.

12) **Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (House_Type).** նշվում է անշարժ գույքի օբյեկտի տեսակը՝ հողամաս, շենք, տուն, կառուցվող շենք կամ այլ գործառնական նշանակություն.

13) **Բնակարանի համար (Building_Number)**. հասցեի նույնականացուցիչ, որը ցույց է տալիս բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի համարը.

14) **Բնակարանի տեսակ (Building_Type)**. նշվում է բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի տեսակը՝ բնակարան, ոչ բնակելի տարածք ավտոտնակ, խանութ կամ այլ գործառնական նշանակություն.

15) **Նկարագրություն (Description)**. այս դաշտում ներառվում է հասցեի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն.

16) **Կադաստրային ծածկագիր (Cadastral_Code)**. անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը.

17) **Հասցեի տրամադրման մասին որոշման ամսաթիվ (Date)**. ցույց է տալիս այն ամսաթիվը, երբ հասցեի տվյալ տարբերակը դարձել է կամ կլինի վավեր իրական աշխարհում.

18) **Հասցեի տրամադրման մասին որոշման համար (Decision_Number)**. նշվում է այն հիմքը, ըստ որի տեղական ինքնակառավարման մարմինը կատարել է հասցեի փոփոխություն կամ տրամադրել է նոր հասցե.

19) **Փոստային դասիչ (Postal_Code)**. փոստային կապի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքի փոստային հասցեների կամ դասիչների բաժանման թվանշային կամ տառային շարքերի համակարգ.

20) **X և Y կոորդինատներ (X, Y)**. Հասցեավորված անշարժ գույքի օբյեկտի տեղը նկարագրող տարածական նույնականացուցիչ, որը որոշվում է կադաստրային քարտեզում արտացոլված անշարժ գույքի կենտրոնակետով:

41. Հասցեի դիրքը ներկայացվում է կադաստրային քարտեզում արտացոլված անշարժ գույքի կենտրոնակետի կոորդինատներով՝ հնարավորինս ճշգրիտ: Առավել ճշգրիտ են լինում ուղղակիորեն տեղում վերցված կոորդինատները, կամ եթե օբյեկտը գոյություն չունի, ապա կոորդինատը վերցվում է հասցեի բաղադրիչներից որևէ մեկից, առաջնահերթությունը տալով այն բաղադրիչին, որը թույլ է տալիս առավել ճշգրիտ որոշել տեղադիրքը: Հողամասի սահմաններում մեկից ավելի միևնույն հասցեով շինությունների առկայության դեպքում, օբյեկտի հասցեի տեղադիրքը որոշվում է ըստ հողամասի գլխավոր շինության կենտրոնակետի կոորդինատներով: Բազմաբնակարան շենքերի

քնակարանների հասցեների տեղորոշումն իրականացվում է կադաստրային քարտեզում արտացոլված բազմաբնակարան շենքի կենտրոնակետի կոորդինատներով: Հասցեների էլեկտրոնային ռեեստրի հիմնական աղյուսակի կառուցվածքը ներկայացված է Հասցե (Addresses) աղյուսակում (աղյուսակ 1): Օժանդակ աղյուսակները ներկայացված են Մարզ (Marz) (աղյուսակ 2), Համայնք (Community) (աղյուսակ 3), Բնակավայրի տեսակ (Settlement_type) (աղյուսակ 4), Բնակավայր (Settlement) (աղյուսակ 5), Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (NAO_type) (աղյուսակ 6), Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (NAO_name) (աղյուսակ 7), Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանման տեսակ (SUB_NAO_type) (աղյուսակ 8), Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (SUB_NAO_name) (աղյուսակ 9), Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (House_Type) (աղյուսակ 10), Բնակարանի տեսակ (Building_Type) (աղյուսակ 11):

41.1. Տարածական (քարտեզագրական) շերտերը ներկայացված են Կադաստրային ծածկագիր (Cadastral_code) (աղյուսակ 12) և Փոստային դասիչ (Postal_code) (աղյուսակ 13) աղյուսակներում, որտեղից ավտոմատ կերպով ստացվում են համապատասխան արժեքները:

Աղյուսակ 1. Հասցե

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Հասցեի արտաքին նույնականացուցիչ (Address_Id)	Integer (10)
Անշարժ գույքի միավորի նույնականացուցիչ (Unit_Id)	Integer (10)
Մարզի անվանում (Marz_Name)	VarChar (15)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (15)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar (50)
Բնակավայրի տեսակ (Settlement_Type)	VarChar (15)
Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (NAO_Name)	VarChar (50)

Ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (NAO_Type)	VarChar (50)
Ենթաներքնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (SUB_NAO_Name)	VarChar (15)
Ենթաներքնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանման տեսակ (SUB_NAO_Type)	VarChar (15)
Անշարժ գույքի օբյեկտի համար (House_Number)	VarChar (15)
Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (House_Type)	VarChar (15)
Բնակարանի համար (Building_Number)	VarChar (15)
Բնակարանի տեսակ (Building_Type)	VarChar (15)
Նկարագրություն (Description)	VarChar (50)
Կադաստրային ծածկագիր (Cadastral_code)	VarChar (35)
Հասցեի տրամադրման մասին որոշման ամսաթիվ (Date)	Date
Հասցեի տրամադրման մասին որոշման համար (Decision_No)	VarChar (8)
Փոստային դասիչ (Postal_code)	Integer (3)
X կոորդինատ (X)	Double (10)
Y կոորդինատ (Y)	Double (10)

Աղյուսակ 2. Մարզ (Marz_Name)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Մարզի նույնականացուցիչ (Marz_Id)	Integer (8)
Մարզի անվանում (Marz_Name)	VarChar (15)

Աղյուսակ 3. Համայնք (Community_Name)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Մարզի նույնականացուցիչ (Marz_Id)	Integer (8)
Համայնքի նույնականացուցիչ (Community_Id)	Integer (8)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (15)

Աղյուսակ 4. Բնակավայրի տեսակ (Settlement_Type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Մարզի նույնականացուցիչ (Marz_Id)	Integer (8)
Համայնքի նույնականացուցիչ (Community_Id)	Integer (8)
Բնակավայրի տեսակ (Settlement_Type)	VarChar (15)
Բնակավայրի տեսակի նույնականացուցիչ (Settlement_Type_Id)	Integer (8)

Աղյուսակ 5. Բնակավայր (Settlement_Name)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Մարզի նույնականացուցիչ (Marz_Id)	Integer (8)
Համայնքի նույնականացուցիչ (Community_Id)	Integer (8)
Բնակավայրի նույնականացուցիչ (Settlement_Id)	Integer (8)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar (15)

Աղյուսակ 6. Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (NAO_type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակի նույնականացուցիչ (NAO_Type_Id)	Integer (8)
Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (NAO_Type)	VarChar (15)

Աղյուսակ 7. Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (NAO_Name)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանման նույնականացուցիչ (NAO_Name_Id)	Integer (8)
Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակի նույնականացուցիչ (NAO_Type_Id)	Integer (8)
Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (NAO_type)	VarChar (30)

Աղյուսակ 8. Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանման տեսակ (SUB_NAO_type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակի նույնականացուցիչ (SUB_NAO_Type_Id)	Integer (8)
Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակ (SUB_NAO_Type)	VarChar (15)

Աղյուսակ 9. Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում
(SUB_NAO_Name)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանման նույնականացուցիչ (SUB_NAO_Name_Id)	Integer (8)
Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի տեսակի նույնականացուցիչ (SUB_NAO_Type_Id)	Integer (8)
Ենթաներբնակավայրային աշխարհագրական օբյեկտի անվանում (NAO_Type)	VarChar (30)

Աղյուսակ 10. Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (House_Type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Անշարժ գույքի օբյեկտի տեսակի նույնականացուցիչ (House_Type_Id)	Integer (8)
Անշարժ գույքի օբյեկտի տեսակ (House_Type)	VarChar (15)

Աղյուսակ 11. Բնակարանի տեսակ (Building_Type)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Բնակարանի տեսակի նույնականացուցիչ (Building_Type_Id)	Integer (8)
Բնակարանի տեսակ (Building_Type)	VarChar (15)

Աղյուսակ 12. Կադաստրային ծածկագիր (Cadastral_code)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Կադաստրային ծածկագրի նույնականացուցիչ (Cadastral_Code_Id)	Integer (15)
Կադաստրային ծածկագիր (Cadastral_Code)	VarChar (15)

Աղյուսակ 13. Փոստային դասիչ (Postal_Code)

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Փոստային նույնականացուցիչ (Postal_ID)	Integer (8)
Փոստային դասիչ (Postal_Code)	VarChar (5)

42. Այլ գերատեսչությունների կամ նախարարությունների կողմից կազմված տվյալների բազաների հետ կապը հաստատվում է ռեյացիոն կապերով «ID» դաշտի միջոցով: Այս բազաներն օգտագործվելու են հին հասցեների ճշգրտման, ինչպես նաև հին անվանումներով հասցեների փնտրման ժամանակ:

ԳԼՈՒԽ 7. «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

43. «Աշխարհագրական անվանումներ» բազային խմբի տարածական տվյալները համարվում են ռեֆերենց, այսինքն՝ տվյալներ, որոնք կազմում են տարածական շրջանակ՝ ճանաչելու աշխարհագրական օբյեկտի դիրքը, ինչպես նաև կապում և մատնանշում են այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են բազային և թեմատիկ խմբերի տարածական տվյալներին: Աշխարհագրական անվանումները լայնորեն կիրառվում են ամենօրյա հաղորդակցության մեջ, վեր-ծառայություններում (ներառյալ գեոպորտալներ) տեղեկատվություն որոնելու, տեղադիրքի վերաբերյալ թեմատիկ

տեղեկատվությանը հղում կատարելու, քարտեզների և հատակագծերի վրա աշխարհագրական տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև նախկինում հավաքագրված տարածական տվյալները մշակելու համար: Աշխարհագրական օբյեկտն աշխարհագրական որոշակի դիրքով ամբողջական և համեմատաբար կայուն կազմավորում է, որն ունի բնական կամ արհեստական ծագում: Իսկ աշխարհագրական օբյեկտի անվանումը (աշխարհագրական անվանումը) աշխարհագրական օբյեկտը ճանաչելու և առանձնացնելու նպատակով տրվող հատուկ անուն է:

44. «Աշխարհագրական անվանումներ» բազային խմբի տարածական տվյալների ստեղծման հիմնական նպատակը՝ բացառել տվյալների իրարամերժությունը, նվազեցնել տարածական տվյալների հետ կապված ծախսերը՝ միաժամանակ ավելացնելով տվյալների մատչելիության աստիճանը, միասնական տեղեկատվական հենքի միջոցով բարձրացնել որոշումների կայացման օպերատիվությունը:

45. Այս տվյալների օգտագործողներ են հանդիսանում բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

46. «Աշխարհագրական անվանումներ» բազային խմբի քարտեզագրական շերտը ներկայացված է հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 1)՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id)**. պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով: Եզակի նույնականացուցիչը չի փոփոխվում տարածական օբյեկտի գոյության ընթացքում:

2) **Մարզի անվանում (Marz_Name)**. ցույց է տալիս այն մարզի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ աշխարհագրական անունը կրող օբյեկտը:

3) **Համայնքի անվանում (Community_Name)**. ցույց է տալիս այն համայնքի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ աշխարհագրական անունը կրող օբյեկտը:

4) **Բնակավայրի անվանում (Settlement_Name)**. ցույց է տալիս այն բնակավայրի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ աշխարհագրական անունը կրող օբյեկտը:

5) **Բնակավայրի տեսակ (Settlement_Type)**. ցույց է տալիս բնակավայրի տեսակը (քաղաք, գյուղ):

6) **Աշխարհագրական օբյեկտի անվանում (Geo_Name)**. ցույց է տալիս օբյեկտին տրված աշխարհագրական անվանումը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանումները տրվում են հայերենով, այս դաշտում անվանումը լրացվում է հայերենով.

7) **Աշխարհագրական օբյեկտի լատինատառ անվանում (Geo_name_eng)**. միջազգային օգտագործման համար նախատեսված փաստաթղթերում, քարտեզներում և այլ նյութերում աշխարհագրական անվանումները փոխանցվում են լատիներեն այբուբենի տառերով (այդ թվում նաև անգլերենով)՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն: Ուստի այս հատկանիշը ցույց է տալիս աշխարհագրական օբյեկտի գործող անվանումը՝ գրված լատինատառ.

8) **Աշխարհագրական օբյեկտի ռուսերեն անվանում (Geo_name_ru)**. միջազգային օգտագործման համար նախատեսված փաստաթղթերում, հատկապես հետսովետական երկրների քարտեզներում և այլ նյութերում աշխարհագրական անվանումները փոխանցվում են ռուսերեն տառերով՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն: Ուստի այս հատկանիշները ցույց է տալիս աշխարհագրական օբյեկտի գործող անվանումները՝ գրված ռուսերեն տառերով.

9) **Աշխարհագրական օբյեկտի տեսակ (Geo_name_type)**. ցույց է տալիս անվանակոչված աշխարհագրական օբյեկտի տեսակը (օրինակ՝ գետ, լիճ, լեռ և այլն).

10) **Թերթի համար (List_number)**. ցույց է տալիս անվանակոչված աշխարհագրական օբյեկտի գտնվելու վայրի տեղագրական 1:25000 նոմենկլատուրայի թերթի համարը,

11) **Մասշտաբ**. ցույց է տալիս այն մասշտաբը, որով նույնականացվել է աշխարհագրական օբյեկտի գտնվելու վայրը.

12) **Որոշման ամսաթիվ (Decision date)**. ցույց է տալիս աշխարհագրական օբյեկտի անվանման մասին որոշման ամսաթիվը.

13) **Գրանցման ամսաթիվ (Accepted_date)**. ցույց է տալիս աշխարհագրական օբյեկտի անվանման գրանցման ամսաթիվը.

14) **Սկզբի ամսաթիվ (Start_date)**. ցույց է տալիս տվյալների բազայում տվյալ աշխարհագրական անվանման մուտքագրման կամ, որ նույնն է, կիրառության մեջ դնելու ամսաթիվը.

15) **Վերջին ամսաթիվ (End_date)**. ցույց է տալիս տվյալների բազայում մուտքագրված տվյալ աշխարհագրական անվանման հեռացման կամ փոփոխման ամսաթիվ.

16) **X և Y կոորդինատներ (X, Y)**. ներկայացվում է աշխարհագրական օբյեկտի դիրքը՝ փաստացի գտնվելու վայրի կենտրոնակետի կոորդինատներով.

17) **Դիտարկման նվազագույն մասշտաբ (Least_Detailed_Scale)**. լուծաչափ, որից ավելի մեծ մասշտաբի դեպքում օբյեկտներին տրված անվանումներն այլևս չպետք է ցուցադրվեն դիտարկման հիմնական պատուհանի մեջ: Օրինակ, երբ նախատեսված է, որ նշված անվանումները պետք է երևան 1:500000-ից մեծ մասշտաբի դեպքում, ապա այս դաշտում կլրացվի 500000 արժեքը: Այն օբյեկտների անվանումների դեպքում, երբ ցուցադրման սահմանափակում չի նախատեսվում, ապա այս դաշտում արժեք չի լրացվում.

18) **Դիտարկման առավելագույն մասշտաբ (Most_Detailed_Scale)**, որից ավելի փոքր մասշտաբի դեպքում օբյեկտներին տրված անվանումները այլևս չպետք է ցուցադրվեն դիտարկման հիմնական պատուհանի մեջ: Մեծ տարածական ընդգրկում ունեցող օբյեկտների անվանումները, ինչպես, օրինակ, լեռնաշղթաների անվանումները, կարող են չպատկերվել 1:10000 մասշտաբից մեծ մասշտաբների դեպքում, այդ պարագայում այս դաշտում կլրացվի 10000 արժեքը: Այն օբյեկտների անվանումների դեպքում, երբ ցուցադրման սահմանափակում չի նախատեսվում, ապա համար այս դաշտում արժեք չի լրացվում.

19) **Անվանման աղբյուր (Name_Source)**. այստեղ ներկայացվում է աշխարհագրական անվանման ծագման աղբյուրը, թե որտեղից է վերցված (օրինակ՝ գազետիր): Աշխարհագրական օբյեկտների անվանումները բացահայտվում են քարտեզների, տպագիր կամ ձեռագիր աղբյուրների վերլուծության, տեղացիների, մասնագետների տեղեկատվության, հարցումների և այլ աղբյուրների միջոցով.

20) **Անվան կարգավիճակ (Name_status)**. ցույց է տալիս անվանակոչված աշխարհագրական անվանման կարգավիճակը (պատմական, պաշտոնական տրված, տեղացիների կողմից օգտագործվող և այլն).

21) **Արտասանություն (Pronunciation)**. ներկայացվում է աշխարհագրական անվանման արտասանության համապատասխան եղանակը: Այս դաշտում կարելի է տեղադրել անգամ արտասանության աուդիո տարբերակ կամ հղում դեպի այդ աուդիո տարբերակը.

22) Աշխարհագրական օբյեկտի անվան ստուգաբանություն/ծագումնաբանություն (Etymology_GEO_Name). ներկայացվում են անվանումների ստուգաբանական և ծագումնաբանական առանձնահատկությունները, պատմամշակութային նշանակությունը:

Աղյուսակ 1. Աշխարհագրական անվանումներ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (ID)	Integer (10)
Մարզի անվանում (Marz_Name)	VarChar (15)
Համայնքի անվանում (Community_Name)	VarChar (15)
Բնակավայրի անվանում (Settlement_Name)	VarChar (15)
Բնակավայրի տեսակ (Settlement_type)	VarChar (50)
Աշխարհագրական օբյեկտի անվանում (Geo_name)	VarChar (50)
Աշխարհագրական օբյեկտի լատինատառ անվանում (Geo_name_eng)	VarChar (50)
Աշխարհագրական օբյեկտի ռուսերեն անվանում (Geo_name_ru)	VarChar (50)
Աշխարհագրական օբյեկտի տեսակ (Geo_name_type)	VarChar (15)
Թերթի համար (List_number)	VarChar (15)
Մասշտաբ (Scale)	VarChar (25)
Որոշման ամսաթիվ (Decision date)	Date
Գրանցման ամսաթիվ (Accepted_date)	Date
Սկզբի ամսաթիվ (Start_date)	Date
Վերջին ամսաթիվ (End_date)	Date
X կոորդինատ (X)	Double (15)
Y կոորդինատ (Y)	Double (15)
Դիտարկման նվազագույն լուծաչափ (Least_Detailed_Scale)	Integer (8)

Դիտարկման առավելագույն լուծաչափ (Most_Detailed_Scale)	Integer (8)
Անվանման աղբյուրը (Name_source)	VarChar (50)
Անվան կարգավիճակ (Name_Status)	VarChar (50)
Արտասանություն (Pronunciation)	Ole Object
Աշխարհագրական օբյեկտի անվան ստուգաբանություն (Etymology_GEO_Name)	VarChar (50)

».

5) 9-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ 9. «ՊԼԱՆԱԲԱՐՁՈՒՆՔԱՅԻՆ ՀԻՄՔ» ԲԱԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

57. «Պլանաբարձունքային հիմք» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծման հիմնական նպատակը միասնական տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ միասնական պետական ռազմավարություն և արդյունավետ կառավարում, քարտեզագրում, մեծ ճշգրտությամբ տվյալների ստացում ապահովելու, ինչպես նաև իրական ժամանակում ավտոմատացված, բազմաչափ, բազմաշերտ տեղեկատվական համակարգ ունենալու համար:

58. Պլանաբարձունքային հիմքին վերաբերող տվյալների հիմնական առանձնահատկություններն են՝

1) հիմք են հանդիսանում թե՛ տեղագրական հանույթների և թե՛ ռազմական պաշտպանողական խնդիրներ լուծելու համար.

2) ապահովում են արբանյակային տեխնոլոգիաների, նավիգացիոն միջոցների և թվային կապի միջոցների կիրառումով ստացվող տվյալների մեծ ճշգրտություն.

3) թույլ են տալիս իրականացնել տրանսպորտային միջոցների և այլ շարժական օբյեկտների աշխատանքի օպտիմալացում և դրանով իսկ լուծել տնտեսության տարբեր բնագավառներում մի շարք կառավարչական խնդիրներ:

59. Այս տվյալների օգտագործողներն են հանդիսանում բոլոր նախարարությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք:

60. Պլանաբարձունքային հիմք տարածական տվյալների խմբի մեջ մտնում են հետևյալ տարածական շերտերը՝ պետական (ազգային) պլանային հիմք, բարձունքային հիմք, պիկետներ:

61. **Պետական (ազգային) պլանային հիմք** - ներկայացվում է որպես կետային շերտ, որտեղ ներկայացվում են գեոդեզիական ցանցի կետերը: Պլանային ցանցերի հիմնական կետերը, համաձայն ընդունված ռեֆերենց էլիպսոիդի, որոշված են գեոդեզիական կամ հարթ-ուղղանկյուն կոորդինատներով: Պետական պլանային գեոդեզիական ցանցերը կառուցվում են եռանկյունավորմամբ, պոլիգոնոմետրիայով և տրիլատերացիայով: Գեոդեզիական կետերի կատալոգները կազմվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2007 թվականի ապրիլի 23-ի N 85-Ն հրամանի:

62. Հայաստանի Հանրապետության տարածքում Ջի Էս Էս (GNSS) արբանյակային դիրքորոշման ընդունիչներով դիտարկված Վի Ջի Էս-84 (ԱՐՄՐԵՖ 02) (WGS-84 (ARMREF 02)) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված Ազգային գեոդեզիական ցանցի /0-ական դասի-5, 1-ին դասի-40, 2-րդ դասի-1069/ կետերը հավասարակշռվել, և կոորդինատները հաշվարկվել են (Այ Թի Ար Էֆ2008/Այ Ջի Էս08) (ITRF2008/IGS08) ստանդարտ միջազգային ռեֆերենց շրջանակներում:

63. Պետական (ազգային) պլանային գեոդեզիական ցանցի հիմնական կետերի վերաբերող հատկանիշներն են (աղյուսակ 1)՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id)**- օբյեկտի արտաքին իդենտիֆիկատորը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով (փաստացի այն ցույց է տալիս պլանային ցանցի ընդհանուր տեսակը).

2) **Հիմնականի համար (NN_Catalog)** - ըստ 1: 200 000 մասշտաբի տեղագրական քարտեզի անվանակարգի.

3) **Արտաքին նշանի բարձրություն (Exterior_Sign_Height)** - նշվում է գետնի մակերևույթից մինչև արտաքին նշանի վերին մասի բարձրությունը (օրինակ՝ 1.25 մ, կամ 6.0 մ բուրգ)։

4) **Արտաքին նշանի տեսակ (Type)** - այստեղ նշվում է, թե տվյալ կետն ինչ տեսակի է՝ Գլանաձև խողովակ, բուրգ, հենանիշ, մշտական գործող ռեֆերենս կայան և այլն։

5) **Կենտրոնի տեսակ (կողմնորոշիչ) (Center_Type)** - նշվում է կենտրոնի համարը թվանշանով արտահայտված և տեսակը։

6) **Գեոդեզիական ցանցի դաս (Geodetic_Class)** - ցույց է տալիս՝ գեոդեզիական ցանցի 0-ական, 1-ին թե 2-րդ դասի է։

7) **Հիմնակետի երկրակենտրոն կոորդինատներ (X, Y, Z).**

8) **Հիմնակետի գեոդեզիական կոորդինատներ (Lat, Long).**

9) **Հիմնակետի հարթ-ուղղանկյուն կոորդինատներ (X ARMREF 02, Y ARMREF 02).**

10) **Հիմնակետի նորմալ բարձրություն (Elevation)** - ցույց է տալիս կետի բացարձակ բարձրությունը՝ արտահայտված մ-ով։

11) **Անվանում (Name)** - ցույց է տալիս գեոդեզիական ցանցի տվյալ հիմնակետի անվանումը։

12) **Ցանցի հավասարակշռման ամսաթիվ (Balance_Date).**

13) **Սկզբի ամսաթիվ (Start_Date)** - այստեղ նշվում է տվյալ գեոդեզիական կետի կամ ռեֆերենս կայանի ստեղծման ամսաթիվը։

14) **Վերջի ամսաթիվ (End_Date)** - այստեղ նշվում է տվյալ գեոդեզիական կետի կամ ռեֆերենս կայանի՝ շահագործումից դուրս գալու ամսաթիվը։

Աղյուսակ 1. Պետական (ազգային) պլանային գեոդեզիական ցանցի հիմնակետեր

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Հիմնակետի համար (NN_Catalog)	Integer (4)
Անվանում (Name)	VarChar (20)

Արտաքին նշանի բարձրություն (Exterior_Sign_Height)	Double (4)
Արտաքին նշանի տեսակ (Type)	VarChar (15)
Կենտրոնի տեսակ (կողմնորոշիչ) (Center_Type)	VarChar (15)
Գեոդեզիական ցանցի դաս (Geodetic_Class)	VarChar (20)
Հիմնակետի երկրակենտրոն կոորդինատներ (X, Y, Z)	Double (10)
Հիմնակետի գեոդեզիական կոորդինատներ (Lat, Long)	Double (10)
Հիմնակետի հարթ-ուղղանկյուն կոորդինատներ (X ARMREF 02, Y ARMREF 02)	Double (10)
Հիմնակետի նորմալ բարձրություն (Elevation)	Double (3)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջի ամսաթիվ (End_Date)	Date
Ցանցի հավասարակշռման ամսաթիվ (Balance_Date)	Date

64. **Բարձունքային հիմք** - ներկայացնում է բարձունքային ցանցերը, որոնք կազմված են այն հենանիշերից, դրոշմանիշերից, հիմնակետերից, եռանկյունավորման և պոլիգոնոմետրական գեոդեզիական կետերից, որոնց համար որոշված են բարձրությունները՝ սկզբնական մակերևույթի նկատմամբ: Պետական (ազգային) բարձունքային գեոդեզիական ցանցերը կառուցվում են երկրաչափական, եռանկյունաչափական և բարոմետրական նիվելիրացմամբ:

65. ՀՀ տարածքում գիտական և գործնական աշխատանքների իրականացման համար գլխավոր բարձունքային հիմք են հանդիսանում I և II դասի նիվելիրային ընթացքներում տեղադրված կետերը: Պետական նիվելիրային ցանցերն անհրաժեշտ են կատարվող բոլոր մասշտաբի տեղագրական հանույթների և գեոդեզիական չափումների համար, որոնք բավարարում են տնտեսության, աստղագեոդեզիական, աերոտիեգերահանությային աշխատանքների և պաշտպանության պահանջները:

66. Այստեղ բարձունքային հիմքին վերաբերող շերտը ներկայացվում է գծային և կետային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 2)՝

1) Արտաքին նույնականացուցիչ (Id).

2) **Հիմնակետի համար (NN_Catalog).**

3) **Բարձունքային կետի անվանում (Name)** - ցույց է տալիս գեոդեզիական ցանցի տվյալ կետի անվանումը.

4) **Դաս (Type)** - այստեղ նշվում է նիվելիրային ցանցերի դասը՝ I և II դասի.

5) **Բարձունքային կետի տեսակ (Point_Type)** - ցույց է տալիս գեոդեզիական ցանցի տվյալ կետի տեսակը, հիմնակետ, հենանիշ, դրոշմանիշ, բուրգ և այլն.

6) **Բարձունքային կետի կենտրոնի տեսակ (Point_Center_Type)** - նշվում է կենտրոնի համարը թվանշանով արտահայտված և տեսակը, օրինակ՝ գլանաձև խողովակ.

7) **Բարձունքային կետի գտնվելու հարթ-ուղղանկյուն կոորդինատներ (X ARMREF 02, Y ARMREF 02).**

8) **Հավասարակշռման ամսաթիվ (Balance_Date)** - ներկայացվում է հավասարակշռման տարեթիվը.

9) **Գեոդեզիական կետի նորմալ բարձրություն (Elevation)** - ցույց է տալիս կետի բացարձակ բարձրությունը՝ արտահայտված մ-ով.

10) **Սկզբի ամսաթիվ (Start_Date)** - այստեղ նշվում է տվյալ բարձունքային կետի ստեղծման տարեթիվը.

11) **Վերջին ամսաթիվ (End_Date)** - այստեղ նշվում է տվյալ բարձունքային կետի՝ շահագործումից դուրս գալու ամսաթիվը:

Աղյուսակ 2. Պետական (ազգային) բարձունքային գեոդեզիական ցանցի հիմնակետեր

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Հիմնակետի համար (NN_Catalog)	Integer (4)
Բարձունքային կետի անվանում (Name)	VarChar (20)
Դաս (Type)	VarChar (20)
Բարձունքային կետի տեսակ (Point_Type)	VarChar (15)

Բարձրության կետի կենտրոնի տեսակ (Point_Center_Type)	VarChar (15)
Բարձրության կետի գտնվելու հարթ-ուղղանկյուն կոորդինատներ (X ARMREF 02, Y ARMREF 02)	Double (10)
Գեոդեզիական կետի նորմալ բարձրություն (Elevation)	Double (4)
Հավասարակշռման ամսաթիվ (Balance_Date)	Date
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

67. **Պիկետներ** - տեղանքի բնորոշիչ կետեր են: Բարձրության կետերը (պիկետները), որոնք անհրաժեշտ են ռելիեֆի պատկերման համար, որոշվում են հիմնական և հանույթային ընթացքների, ինչպես նաև գեոդեզիական հիմքի կետերից: Կախված հանութագրվող տարածքի մասշտաբից և ռելիեֆի անկումից՝ սահմանված են պիկետների միջև եղած առավելագույն հեռավորության թույլատրելի չափեր՝ արտահայտված մ-ով: Պիկետներին վերաբերող շերտը կետային տեսակի է՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 3)՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Պիկետի նորմալ բարձրություն (Elevation)** - ցույց է տալիս կետի բացարձակ բարձրությունը՝ արտահայտված մ-ով.

3) **Անվանում (Name)** - ցույց է տալիս պիկետի անվանումը:

Աղյուսակ 3. Պիկետներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Պիկետի նորմալ բարձրություն (Elevation)	Double (4)
Անվանում (Name)	VarChar (20)

6) 11-րդ գլխի վերնագրում «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» բառը փոխարինել «ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» բառով, իսկ 80-րդ, 81-րդ և 88-րդ կետերում «Տրանսպորտային» բառը փոխարինել «Ճանապարհատրանսպորտային» բառով:

6. Որոշմամբ հաստատված N 3 հավելվածում՝

1) 2-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«ԳԼՈՒԽ 2. «ԱՆՏԱՌՆԵՐ» ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲԱԶՄՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

13. Անտառը՝ անտառային կամ անտառապատման նպատակով հատկացված այլ հողերում ծառափային բուսականության գերակշռությամբ կենսաբանական բազմազանության ու բնական միջավայրի բաղադրիչների փոխադարձորեն կապված և միմյանց վրա փոխազդող ամբողջություն է, որի նվազագույն մակերեսը կազմում է 0,1 հեկտար, նվազագույն լայնությունը՝ 10 մետր, և որտեղ ծառերի սաղարթը ծածկում է տվյալ տարածքի առնվազն 30 տոկոսը, ինչպես նաև նախկինում անտառածածկ անտառային հողերի ոչ անտառածածկ տարածքները:

14. «Անտառներ» տարածական տվյալների էլեկտրոնային միասնական բազայի կառուցման հիմնական նպատակը տնտեսական խնդիրների, սոցիալական հարցերի և ապօրինի հատումների հետ կապված խնդիրների լուծմանը նպաստելն է: Այս խմբի տվյալները կարող են օգտագործվել նաև անտառային հողերի վրա աշխատանքների կազմակերպման և կատարման, անտառների նպատակային, ինչպես նաև գործառնական նշանակությունը փոխելու, անտառօգտագործողների տնտեսական գործունեության գնահատման, անտառների կայուն կառավարման նպատակով:

15. «Անտառներ» թեմատիկ խմբի տվյալների օգտագործողներ են ֆիզիկական և իրավաբանական անձինք, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

16. «Անտառներ» թեմատիկ խմբում ներառված տարածական տվյալները ներկայացված են՝ Անտառներ և անտառային ռեսուրսներ, Անտառօգտագործում տարածական շերտերով:

17. *Անտառներ և անտառային ռեսուրսներ* շերտը ներկայացնում է տեղեկատվություն անտառային տնտեսությունների, անտառների նշանակության, անտառային ռեսուրսների որակական, քանակական և տնտեսական բնութագրերի մասին:

18. Անտառտնտեսություններն իրենց մեջ ներառում են անտառապետություններ, անտառապետությունները բաժանվում են քառակուսիների, որոնք էլ, իրենց հերթին, բաժանվում են ավելի փոքր միավորների՝ հատվածների: Հատվածն ամենափոքր տարածական միավորն է: Քառակուսային ցանցի նախագծի կազմման ժամանակ, որպես քառակուսային սահմաններ, կարող են օգտագործվել մայրուղիներ, մշտական գործող անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհներ, հակահրդեհային անջրպետներ, էլեկտրական հաղորդակցության և գազատար ուղիներ, գետեր, գետակներ, լեռնաշղթաներ, կիրճեր: Հատվածն իրենից ներկայացնում է սահմանափակ տարածք, որը կից անտառամասերից ունի հիմնական գնահատման ցուցանիշների սահմանված նորմատիվներից նկատելի տարբերություն և պահանջում է միանման անտառտնտեսական միջոցառումներ ամբողջ հատվածում:

19. Անտառներ և անտառային ռեսուրսներ, Անտառօգտագործում տարածական շերտերը ներկայացվում են պոլիգոնային տեսքով՝ 1-ին աղյուսակում ներկայացված հատկանիշներով.

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id)** - օբյեկտի արտաքին նույնականացուցիչը պատասխանատու մարմնի կողմից հատկացված եզակի նույնականացուցիչ է, որը կարող է օգտագործվել որպես արտաքին բանալի՝ տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով.

2) **Հին համար (Old Number)** - ցույց է տալիս անտառապետության քառակուսու և հատվածի հին համարը.

3) **Անտառապետության անվանում (Name)** - հատուկ գոյական անուն, որը ցույց է տալիս անտառապետությանը տրված աշխարհագրական անվանումը: Այն եզակի նույնականացուցիչ է և կարող է օգտագործվել որպես «բանալի»՝ տարբեր հավելվածների միջոցով տարածական օբյեկտին հղում կատարելու նպատակով.

4) **Անտառտնտեսության անվանում (Forestry_Name)** - ցույց է տալիս անտառտնտեսության աշխարհագրական անվանումը: Անտառային տնտեսությունը արտադրական միավոր է, որի գործունեության նպատակն անտառների կայուն կառավարումն է.

5) **Մակերես (Area)** - ներկայացվում է հատվածի մակերեսը (հա).

6) **Մարզի անվանում (Name of the Marz)** - ցույց է տալիս այն մարզի/մարզերի անվանումը, որտեղ գտնվում է տվյալ հատվածը.

7) **Հողատիպ (Soil_Type)** - ցույց է տալիս հատվածի հողատիպի անվանումը.

8) **Բարձրություն (Elevation)** - ցույց է տալիս հատվածի ծովի մակարդակից ունեցած միջին բարձրությունը՝ արտահայտված մ-ով.

9) **Ծառատեսակ (Tree_Type)** - ներկայացվում են հատվածում գերակշռող ծառատեսակները,

10) **Նպատակային նշանակություն (Purpose)** - այստեղ ներկայացվում է անտառների հիմնական նպատակային նշանակությունը (պաշտպանական, հատուկ, արտադրական).

11) **Կատեգորիա (Category)** - ներկայացվում է անտառային հողի ֆունկցիոնալ նշանակությունը: Անտառային հողերը՝ անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր են: Համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի օգոստոսի 10-ի N 130-Ն հրամանի հավելվածի 13-րդ աղյուսակի՝ անտառային հողերի կազմում ընդգրկվում են նաև անտառածածկ տարածքներ, այդ թվում՝ անտառմշակույթներ, չմիակցված անտառմշակույթներ, անտառային տնկարաններ, պլանտացիաներ, ընդհանուր անտառային հողեր, ինչպես նաև ոչ անտառածածկ տարածքներ, հրդեհված և ոչնչացված տարածքներ, հատված տարածքներ, նոսրուտներ, բացատներ: Անտառային հողերի կազմում ընդգրկվում են նաև ոչ անտառային հողեր՝ վարելահող, խոտհարք, արոտավայր, ջրեր, այգիներ, ճանապարհներ, ժամանակավոր օգտագործվող տարածքներ, ճահճուտներ, ավազուտներ, քարացրոններ և այլ հողեր.

12) **Սեփականության իրավունք (Property_Right)** - ցույց է տալիս, թե անտառները և անտառային հողերն ում սեփականության ներքո են (պետության, համայնքի, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց): Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո:

13) **Քառակուսի (Square).**

14) **Հատված (Part).**

15) **Ծառուտի լրիվություն (Completeness_Grove).**

16) **Ծառուտի միջին տարիք (Average_Age_Grove).**

17) **Հասակային դաս (Height_Class).**

18) **Պաշար (Reserve).**

19) **Տարիքային խումբ (Age_group).**

20) **Բոնիտետ (Bonitet).**

21) **Անտառի տիպ (ըստ հողի և ըստ խոտածածկի) (Forest_Type_By_Soil_Grass).**

22) **Սկզբի ամսաթիվ (Start_Date)** - ցույց է տալիս տվյալների բազայում տեսակների վերաբերող տվյալի մուտքագրման ամսաթիվը:

23) **Վերջին ամսաթիվ (End_Date)** - ցույց է տալիս տվյալների բազայում տեսակների վերաբերող տվյալի հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

Աղյուսակ 1. Անտառներ և անտառային ռեսուրսներ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Հին համար (Old Number)	VarChar (10)
Անտառապետության անվանում (Name)	VarChar (50)
Անտառտնտեսության անվանում (Forestry_Name)	VarChar (50)

Մակերես (Area)	Double (6)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Բարձրություն (Elevation)	Integer (3)
Ծառատեսակ (Tree_Type)	VarChar (50)
Հողատիպ (Soil_Type)	VarChar (50)
Կատեգորիա (Category)	VarChar (50)
Ֆունկցիոնալ նշանակություն (Operational_Use)	VarChar (50)
Սեփականության իրավունք (Property_Right)	VarChar (20)
Քառակուսի (Square)	Integer (10)
Հատված (Part)	Integer (10)
Ծառուտի լրիվություն (Completeness_Grove)	Double (3)
Ծառուտի միջին տարիք (Average_Age_Grove)	Double (3)
Հասակային դաս (Height_Class)	Integer (2)
Պաշար (Reserve)	Double (3)
Տարիքային խումբ (Age_group)	VarChar (10)
Բոնիտետ (Bonitet)	VarChar (3)
Անտառի տիպ (ըստ հողի և ըստ խոտածածկի) (Forest_Type_By_Soil_Grass)	VarChar (20)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

20. *Անթրափոփոխություն* տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ 2-րդ աղյուսակում ներկայացված հատկանիշներով՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Անտառտնտեսության անվանում (Forestry_Name).**

3) **Անտառօգտագործման տեսակ (Forest_Use_Type)** - ցույց է տալիս անտառաշինական նախագծերով (անտառակառավարման պլաններ) թույլատրված և փաստացի անտառօգտագործման տեսակները (բնափայտի մթերում, երկրորդական անտառանյութի մթերում, կողմնակի անտառօգտագործում, կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակներով անտառօգտագործում, գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում, մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում.

4) **Քառակուսի (Square).**

5) **Հատված (Part).**

6) **Հատման համար նախատեսված պաշարը (Reserve_Felling).**

7) **Ծառուտի լրիվություն (Completeness _ Grove).**

8) **Հատվող ընդհանուր ծավալ (Total_Area _ Crossing).**

9) **Շինափայտ (Timber).**

10) **Վառելափայտ (Firewood).**

11) **Լիկվիդ սաղարթից (Foliage_Liquid).**

12) **Թափուկ (Wood _ Waste).**

13) **Բնական վերած (Natural _ Growth).**

14) **Սերմնային ծագման անտառների մակերեսներ.**

15) **Անտառավերականգնման եղանակ (Method_Reforestation).**

16) **Անտառավերականգնման պատասխանատուն (Responsible _ Reforestation).**

17) **Իրավունքի տեսակ (Right_Type)** - ցույց է տալիս քաղաքացիների և իրավաբանական անձանց օգտագործման տրված անտառների օգտագործման իրավունքի տեսակը (վարձակալություն, հավատարմագրային կառավարում և այլն).

18) **Ծառահատման տեսակ.**

19) **Մակերես (Area).**

20) **Մարզի անվանում (Name of the region).**

21) **Ծառատեսակ (Tree_Type).**

22) **Սկզբի ամսաթիվ (Start_Date).**

23) **Վերջին ամսաթիվ (End_Date).**

24) Անտառապետության անվանում (Name):

Աղյուսակ 2. Անտառօգտագործման շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Անտառտնտեսության անվանում (Forestry_Name)	VarChar (50)
Անտառօգտագործման տեսակ (Forest_Use_Type)	VarChar (30)
Քառակուսի (Square)	Integer (10)
Հատված (Part)	Integer (10)
Հատման համար նախատեսված պաշար (Reserve_Felling)	Double (6)
Ծառուտի լրիվություն (Completeness _ Grove)	Double (6)
Հատվող ընդհանուր ծավալ (Total _ Area _ Crossing)	Double (6)
Շինափայտ (Timber)	Double (6)
Վառելափայտ (Firewood)	Double (6)
Լիկվիդ սաղարթից (Foliage Liquid)	Double (6)
Թափուկ (Wood_Waste)	Double (6)
Բնական վերած (Natural Growth)	Double (6)
Սերմնային ծագման անտառների մակերեսներ	Double (6)
Անտառավերականգնման եղանակ (Method_Reforestation)	VarChar (30)
Անտառվերականգնման պատասխանատու (Responsible_Reforestation)	VarChar (30)
Իրավունքի տեսակ (Right_Type)	VarChar (30)
Ծառահատման տեսակ	VarChar (30)
Մակերես (Area)	Double (6)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)

Ծառատեսակ (Tree_Type)	VarChar (50)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date
Անտառապետության անվանում (Name)	VarChar (50)

21. *Անտառավերականգնում* տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ 3-րդ աղյուսակում ներկայացված հատկանիշներով՝

- 1) Արտաքին նույնականացուցիչ (Id).
- 2) Անտառտնտեսություն (Forestry).
- 3) Քառակուսի (Square).
- 4) Հատված (Part).
- 5) Անտառվերականգնման տեսակ և եղանակ (Type_Method _Reforestation).
- 6) Մակերես (Area).
- 7) Սկզբի ամսաթիվ (Start_Date).
- 8) Վերջին ամսաթիվ (End_Date).
- 9) Անտառապետության անվանում (Name):

Աղյուսակ 3. Անտառվերականգնում շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer(10)
Անտառտնտեսություն (Forestry)	VarChar (30)
Քառակուսի (Square)	VarChar (30)
Հատված (Part)	VarChar (30)
Անտառվերականգնման տեսակ և եղանակ (Type_Method _Reforestation)	VarChar (30)
Մակերես (Area)	Double(6)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

Անտառապետության անվանում (Name)	VarChar (50)
---------------------------------	--------------

22. «Անտառներ» թեմատիկ խմբի տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ տոպոլոգիական կանոնին՝ պետք է բացառվեն սահմանների վերադրման, միմյանց հետ հատման դեպքերը:».

2) 3-րդ գլխի 28-րդ կետի 6-րդ ենթակետում «Ձեռնարկության տեսակ (Enterprise_Type)» բառերը փոխարինել «Գործառնական ֆունկցիա (Operating function)» բառերով.

3) 3-րդ գլխի 2-րդ աղյուսակում «Ձեռնարկության տեսակ (Enterprise_Type)» բառերը փոխարինել «Գործառնական ֆունկցիա (Operating function)» բառերով.

4) 4-րդ գլխի 39-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «10) Մակերես (Area) ներկայացվում է պոլիգոնային շերտով ներկայացված աղետի կամ վտանգի ընդգրկված տարածքը՝ արտահայտված մ²-ով:».

5) 5-րդ գլխի 47-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28-րդ ենթակետով՝ «28) Պահպանական գոտի (Conservation zone) - ցույց է տալիս, թե արդյոք ընտրված օբյեկտը կամ տարածքը պատմամշակութային օբյեկտի պահպանական գոտին է, թե ոչ:».

6) 5-րդ գլխի 1-ին աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝
«

Պահպանական գոտի (Conservation zone)	Boolean
-------------------------------------	---------

»,

7) 5-րդ գլխի 1-ին աղյուսակի «Տվյալի տեսակ (Data type)» սյունակի 25-րդ տողում «VarChar (10)» բառը և թիվը փոխարինել «Boolean» բառով.

8) 7-րդ գլխի 68-70-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«68. **Երկրագործություն** - ընդգրկում է պարենային, տեխնիկական, կերային և գյուղատնտեսական այլ բույսերի մշակությունը: Երկրագործությանը վերաբերող տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 2)՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Գյուղատնտեսական հողահանդակ (Land_Cover_Type)** - ներկայացվում է գյուղատնտեսական հողահանդակի տեսակը (այգիներ, խոտհարք, արոտավայր, վարելահող).

3) **Մշակաբույսի տեսակ (Crop_Type)** - ներկայացվում է մշակվող բուսատեսակի մասին տեղեկատվություն (պարենային, տեխնիկական, կերային և այլն).

4) **Մարզի անվանում (Name of the region).**

5) **Ոռոգում (Irrigation)** - ներկայացվում է ոռոգման մասին տեղեկատվություն (օրինակ՝ ոռոգվող, անջրդի և այլն).

6) **Ոռոգման տեսակ (Irrigation_Type)** - ներկայացվում է ոռոգման ձևի մասին տեղեկատվություն (օրինակ՝ կաթիլային և այլն).

7) **Սկզբի ամսաթիվ (Start_Date).**

8) **Վերջին ամսաթիվ (End_Date):**

Աղյուսակ 2. Երկրագործություն շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Գյուղատնտեսական հողահանդակ (Land_Cover_Type)	VarChar (30)
Մշակաբույսի տեսակ (Crop_Type)	VarChar (40)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Ոռոգում (Irrigation)	VarChar (20)
Ոռոգման տեսակ (Irrigation_Type)	VarChar (30)
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

69. **Խաղողի տնկարկ** - նույն հողամասում գտնվող խաղողի վազերի շարունակական և ամփոփ առկայություն, որը սահմանագատվում է հարևան տարածքներից՝ հաշվի առնելով արտադրության մասնագիտացումը, այգու տնկման տարեթիվը, ոռոգման տեսակը, սորտային կազմը և այլ բնութագրիչներ, այդ թվում՝ խաղողի գինեմետ և/կամ սեղանի և/կամ համապիտանի սորտերով տնկված այգի: Այս տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հիմնական հատկանիշներով (աղյուսակ 2.1)

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Սկզբի ամսաթիվ (Start_Date).**

3) **Օգտագործում (Utilization)** - ներկայացվում է խաղողի կիրառման նպատակը՝ 1. գինեմետ, 2. սեղանի, 3. համապիտանի.

4) **Տնկման տարեթիվ (Planting_Year)** - ներկայացվում է տնկարկի տնկման տարեթիվը.

5) **Տնկարկի փաստացի մակերես (Area)** - ներկայացվում է տնկարկի պոլիգոնի փաստացի մակերեսը (չափման միավոր՝ հա).

6) **Սորտ (Variety)** - ներկայացվում է տնկարկում մշակվող սորտը/սորտերը.

7) **Արմատակալ (Rootstock)** - ներկայացվում է ֆիլոքսերադիմացկուն արմատակալով պատվաստված վազերի առկայությունը՝ 0-ոչ, 1-այո.

8) **Ոռոգում (Irrigation)** - ներկայացվում է ոռոգման մասին տեղեկատվություն՝ 1. ոռոգվող, 2. անջրդի.

9) **Ոռոգման տեսակ (Irrigation_Type)** - ներկայացվում է ոռոգման ձևի մասին տեղեկատվություն՝ 1. ավանդական (առվային եղանակ), 2. խորքային հորերով, 3. կաթիլային.

10) **Փաստացի ստացված բերքի քանակ (Yield)** - ներկայացվում է տնկարկի տվյալ տարվա բերքատվությունը (չափման միավոր՝ ց/հա).

11) **Ապահովագրություն (Insurance)** - ներկայացվում է գյուղատնտեսական ապահովագրության առկայությունը՝ 0-ոչ, 1-այո.

12) **Վերջին ամսաթիվ (End_Year)** - ներկայացվում է տվյալների բազայում խաղողի տնկարկի վերաբերյալ տվյալի հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

Աղյուսակ 2.1. Խաղողի տնկարկ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Սկզբի ամսաթիվ (Start_Year)	Date
Օգտագործում (Utilization)	Integer (10)
Տնկման տարեթիվ (Planting_Year)	Integer (10)
Տնկարկի փաստացի մակերես (Area)	Double (10)
Սորտ (Variety)	VarChar (30)
Արմատակալ (Rootstock)	Boolean (10)
Ոռոգում (Irrigation)	Integer (10)
Ոռոգման տեսակ (Irrigation_Type)	Integer (10)
Փաստացի ստացված բերքի քանակ (Yield)	Double (10)
Ապահովագրություն (Insurance)	Boolean (10)
Վերջին ամսաթիվ (End_Year)	Date

70. *ձկնաբուծություն* տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 3)՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Անվանում (Name)** - ներկայացվում է ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսության անվանումը.

3) **Մարզի անվանում (Name of the region).**

4) **Ջրի աղբյուր (Water_Source)** - ներկայացվում է՝ ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսությունն ինչպիսի ջրաղբյուրից է օգտվում (օրինակ՝ ստորգետնյա, մակերևութային).

5) **Ջրի քանակ (Water_Quantity)** - ներկայացվում է ջրի աղբյուրից վերցված ջրի քանակը՝ մ³/վ.

6) **Գործունեության տեսակ (Activity_Type)** - ներկայացվում է փաստացի գործունեության հիմնական տեսակը (օրինակ՝ մանրածկան բուծում և այլն)։

7) **Հիմնական ձկնատեսակ (Fish_Species)** - ներկայացվում են ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսության հիմնական ձկնատեսակները։

8) **Սուբյեկտի տեսակ (Subject_Type)** - ներկայացվում է ձկնաբուծությամբ զբաղվող սուբյեկտի տեսակը (օրինակ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ)։

9) **Թույլտվություն (Permission)** - ներկայացվում է պաշտոնական որոշման (պաշտոնական համաձայնություն), թույլտվություն տրամադրելու մասին տեղեկատվություն։

10) **Կարգավիճակ (Status)** - ցույց է տալիս ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսության կարգավիճակը (օրինակ՝ գործող, ապամոնտաժված և այլն)։

11) **Տնտեսության ստեղծման ամսաթիվ (Valid_From)**։

12) **Տնտեսության դադարեցման ամսաթիվ (Valid_To)**։

13) **Սկզբի ամսաթիվ (Start_Date)**։

14) **Վերջին ամսաթիվ (End_Date)**։

Աղյուսակ 3. Ձկնաբուծություն շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի Տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ կամ համար (Id)	Integer (10)
Անվանում (Name)	VarChar (50)
Մարզի անվանում (Name of the region)	VarChar (15)
Ջրի աղբյուր (Water_Source)	VarChar (20)
Ջրի քանակ (Water_Quantity)	Double (6)
Գործունեության տեսակ (Activity_Type)	VarChar (30)
Հիմնական ձկնատեսակ (Fish_Species)	VarChar (50)
Սուբյեկտի տեսակ (Subject_Type)	VarChar (20)
Թույլտվություն (Permission)	VarChar (20)
Կարգավիճակ (Status)	VarChar (30)

Տնտեսության ստեղծման ամսաթիվ (Valid_From)	Date
Տնտեսության դադարեցման ամսաթիվ (Valid_To)	Date
Սկզբի ամսաթիվ (Start_Date)	Date
Վերջին ամսաթիվ (End_Date)	Date

».

9) 7-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 71-րդ կետով՝

«71. **Սահմանափակումներ** - շերտը ներկայացվում է որպես պոլիգոնային շերտ՝ հետևյալ հատկանիշներով (աղյուսակ 4)՝

1) **Արտաքին նույնականացուցիչ (Id).**

2) **Սահմանափակման տեսակ (Restriction_Type)** - ներկայացվում է սահմանափակման տեսակը (օրինակ՝ պահպանության գոտի, սահմանային գոտի).

3) **Մակերես (Area).**

4) **Պարագիծ (Perimeter)** - տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ տոպոլոգիական կանոնին՝ պոլիգոնային շերտերի համար պետք է բացառվեն վերադրման, միմյանց հետ հատման դեպքերը:

Աղյուսակ 4. Սահմանափակումներ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	Տվյալի Տեսակ (Data type)
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Սահմանափակման տեսակ (Restriction_Type)	VarChar (30)
Մակերես (Area)	Double(6)
Պարագիծ (Perimeter)	Double (6)

».

10) 15-րդ գլխում՝

ա. վերնագրում «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» բառը փոխարինել «ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» բառով,

բ. 189-րդ, 190-րդ և 202-րդ կետերում «Տրանսպորտային» բառը փոխարինել «Ճանապարհատրանսպորտային» բառով,

գ. 191-րդ կետում «տրանսպորտային ցանցից» բառերը փոխարինել «ճանապարհատրանսպորտային ցանցից» բառերով:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան